

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Ուսանողներին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից ամսագրության մէջ:

Օտարապետացիք չենում են սպասել:

Тифлис. Редакция «Менк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ առաւօրեայ օրերէն):

Հայտարարութիւն ընդունվում է ամեն ինչով:

Հայտարարութիւններին համար գնորդում են
կտրարանէն ըստ ինչ 2 կոպեկով:

ԲՈՎԱՆԳԱՆՈՒԹԻՒՆ

Գիւղական կալուածները.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Նամակ Բագրիւմ: Նամակ Խմբագրութիւն:
Ներքին լուրերը.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գեր-
մանիա: Թիւրքիա: Ֆրանսիա: Նամակ Թիւրքիա-
յից: Նամակ Թիւրքիայից:— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
ՆԵՐՔԻՆ:

ԳԻՒԳԱԿԱՆ ԿԱՆՈՒՄՆԵՐ

Ուսու սլավոնոֆիլները անդադար կրի-
նելով թէ արեւմուտքը փոստ է, թէ Ռու-
սաստանը իր տնտեսական եւ բարոյական նոր
ձեւերով պէտք է վերանորոգի ամբողջ եւ-
րոպան, զլիսաւորապէս հիմնվում էին իրանց
համոզմունքի մէջ գիւղական համայնքի
հողատիրութեան ձեւի վրա, որ չը կայ եւ-
րոպայում, բայց որ իբր թէ յատուկ է մի-
միայն սլավոնացիներին:

Նախ պէտք է ասել, որ գիւղական կա-
լուածներին համայնքի ձեւը ընդհանուր էր
մի ժամանակ ամբողջ եւրոպային, մանա-
ւանդ գերմանական ցեղին եւ առհասարակ
յատուկ է այն բոլոր ազգերին, որոնք դեռ
հասարակական զարգացման շատ բարձր
աստիճանի վրա կանգնած չեն, յատուկ է
այն բոլոր երկրներին, որտեղ հողերը հա-
մեմատաբար ազգաբնակչութեան թւի հետ
շատ են, որտեղ աղքատները չեն հասնում
կոտորածի, չեն հասնում ազգաբնակչութեան
շատանալով եւ ժողովուրդը անտեսապէս եւ
մոտաւորապէս զարգանալով, համայնքի հողի
սեփականութեան ձեւը կորչում էր եւ նրա
տեղը հետզհետեւ բռնում էր գիւղական
անձնական հողատիրութեան ձեւը:

Համայնքի ձեւը ունի իր լաւ եւ իր վատ
կողմերը: Նրա լաւ կողմը նրա մէջն է կա-
յանում, որ գիւղացին երբեք չէ կարող
աղքատանալ եւ հեռաւորապէս չէ կարող կազ-
մվել գիւղական պրոլետարիատ: Գիւղը հա-
սարակութեամբ տիրում է հողի վրա, ա-
մեն մի ծուխ ստանում է ժամանակա-
ւորապէս հողի մի յայտնի չափ վայել-
չելու, մշակելու, վարելու իրաւունքը: Մի
յայտնի ժամանակամիջոցից յետոյ նա յետ
է դարձնում իր կտորը համայնքին եւ ստա-
նում է նրանից մի այլ կտոր եւ այսպէս շա-
րունակաբար: Գիւղացին իրաւունք չունի
ոչ ծախել, ոչ գրաւ դնել իր հողերը, քա-
նի որ իւրաքանչիւր կտորի վրա ժամանա-
կաւորապէս է տիրում եւ հողերը հասարա-
կաց են: Այդպիսով գիւղացին երբեք չէ կա-
րող աղքատանալ: Ուրիշ կողմից հասարա-
կաց հողատիրութիւնը այն վնասն է ներ-
կայացնում, որ գիւղացին անձնական հող
չունենալով, երբեք իրան կատարելապէս
կապված չէ գրում հողի հետ, չէ ջանում
նրան լաւ մշակել, նրան բարւոքել, քանի որ
գիտէ թէ երկու, երեք տարուց յետոյ իր
հողի կտորը կանցնի մի այլ ծուխի ձեռքը:
Այդ պատճառով գիւղական տնտեսութիւնը
հասարակաց հողերի վրա երբեք չէ լինում
այն աստիճան ծաղկած, որքան անձնական
հողերի վրա: Անձնական հողի ձեւը այն
արժանաւորութիւնն ունի, որ գիւղացին
ամեն ջանք է դրած դնում բարւոքել իր
հողը, ծաղկեցնել նրան, կատարելագործել

տնտեսական ձեւերը, պարարտացնել գետնը,
զիտենալով որ ամեն մի քարելաւութիւն, որ
անում է իր կտոր հողի վրա, իր համար է
անում, իր հողն է մշակում, իր համար
շահաւէտ է ամեն մի կատարելագործու-
թիւնը, իր ոչ մի ջանքը կորչելու չէ: Այս-
պէս է միշտ ստեղծված մարդը որ անձնա-
կան շահը միշտ աւելի զօրեղ դրդել է աշ-
խատանքի եւ կատարելագործութեան, քան
թէ հասարակաց շահը, որին ըմբռնելու,
որին անկեղծ ծառայելու համար հարկաւոր
է անհամեմատ աւելի բարձր մտաւոր եւ
բարոյական զարգացումն ունենալ:

Ամենալաւ ապացոյց որ համայնքի հողա-
տիրութեան ձեւը սեփական չէր միմիայն
սլավոնացիներին, այն է որ նոյն ձեւը հողի
սեփականութեան մէջ տեսնում ենք եւրո-
պայի ազգերի մէջ միջին դարերում, նոյնը
եւ ասիական ազգերի մէջ՝ հայերի եւ պար-
սիկների մէջ, որին վկայ են հասարակաց
գիւղական հողերը եւրեւսեան նահանգում:

Բայց չը նայելով որ ուսու ազգասէրները
պարծենում էին դրանով, որ գիւղական հա-
սարակաց հողերի ձեւը յատուկ է միմիայն
սլավոնացիներին եւ նայում էին այդ հո-
ղային սեփականութիւն վրա որպէս մի եւ-
րոպայի վրա, որին վիճակված է աւելի
ամբողջ եւրոպային տնտեսական մի նոր եւ
փրկարար ձեւ, որ պէտք է վերանորոգի առ-
բողջ եւրոպան եւ ազատի նրան գիւղական
պրոլետարիատից, — այնու ամենայնիւ մենք
ակնառու ենք լինում, ինչպէս Ժորտերի
ազատութիւնից յետոյ նոյն իսկ Ռուսաս-
տանի ներքին նահանգներում անձնական
հողատիրութիւնը հետզհետեւ հասարակաց
հողերի ձեւի տեղ է բռնում: Եւ դրա հե-
տեանք ինչ է լինում. գիւղացիներից
շատերը, քիչ շատ միջոցներ ունելով, կա-
րողացան իրանց համար առնել անձնական
հողեր, բայց այնքան միջոց չունելով որ
ծաղկեցնեն տնտեսութիւն այդ հողի վրա,
դիցուք միջոց չունելով կրկնագործական
մեքենաներ առնելու, անաղող տարուց յե-
տոյ սերմ առնելու, չիմանալով կտաւաբեր
հողը, կամ վերջապէս գնած լինելով մի հող,
որտեղ միայն վարելահող կայ, բայց արօ-
տատեղիք չը կան, գրաւ են դնում իրանց
հողը մի փողատէր մարդու մօտ, մեծ տո-
կոսով գումարներ են փոխ առնում — եւ
միջոց նրանց հողերը անցնում են փողա-
տէր մարդիկների վաշխառուներին, հարուստ
վաճառականներին, հարստահարողների ձեռ-
քը: Շատ անգամ ամբողջ համայնքը որ ստա-
ցել է հողեր, որոնց պակաս է, դիցուք, արօ-
տատեղիք, — ծախում է իր հողերը մի
երրորդ անգամ:

Այդպիսով հետզհետեւ հողի սեփականա-
տէրերը դառնում են ոչ հին կալուածա-
տէրերը, ոչ էլ գիւղացիները, այլ մի երրորդ
դասակարգին պատկանողներ՝ հարստացած
վաճառականները:

Եւ ի՞նչ համայնքի հողի ձեւը այն ձեւն
է, որ միակ կարող է պահպանել գիւղական
դասակարգը աղքատանալուց, պրոլետարիատ
իւր միջոց ծնեցնելուց, ինչ է հասարակաց
հողերի ձեւը տէրութեան կողմից էլ հոգե-
նաւորութիւն է վայելում, ինչ է ու՛ թէ

սլավոնացիներին յատուկ է, թէ ընդհանուր
է եւ մեր սահմանադրու երկրի մէջ ընդ-
առառ ասիական ազգերին, — ինչով բացա-
ւորեն որ տէրութեան պաշտօնականների մի-
ջից կազմված յանձնաժողովը ջանում է
երեւեան նահանգում համայնքի հողերը
անձնական հողեր դարձնել:

Բայց ինչքան էլ զանազան սլավոնա-
ֆիլները, զանազան Դոստոեւսկիները եւ
Ախտոմսկիները եւրոպային փոստ անուա-
նեն, դարձեալ նրանք կարող են շատ բան
սովորել եւրոպայից:

ձեւարկում է եւրոպայի մի քանի երկր-
ներում, ինչպէս, օրինակ, Անգլիայում, հո-
ղերը մի քանի լուրջերի սեփականութիւն
են, իսկ գիւղական դասը անհող է, բայց
եւրոպական ուրիշ երկրներում՝ Ֆրանս-
իայում, Շվեյցարիայում, Աւստրիայում եւ
Գերմանիայում կարողացան միացնել հողե-
րի տիրապետութեան երկու ձեւերը՝ անձ-
նական եւ համայնքի հողերի ձեւը, որոնք
իրանց փոխադարձ պակասութիւններով եւ
արժանաւորութեամբ միմեանց հաւասարա-
կեցում են: Գիւղացին ունի անձնական հող,
բայց եւ գիւղական համայնքը ունի իր հա-
սարակաց հողեր: Այդպիսով մին միւսին
պահպանում են:

Կանոնաւոր եւ հաստատ գիւղական տըն-
տեսութեան համար, երկրագործ դասակար-
գը աղքատանալուց, գիւղական պրոլետա-
րիատ ծնելուց եւ հարստահարող ձեռքերից
ապահովելու համար հարկաւոր է միացնել հո-
ղատիրութեան երկու ձեւերն էլ՝ անձնական
եւ հասարակաց հողի ձեւերը: Այդպիսով,
բայց, յայտնի բերքեր ցանկելու
համար վարելահողերը պէտք է գիւղացիներ-
ի անձնական հողեր լինեն, բայց արօտա-
տեղերը, այն հողերը որոնց վրա համայն-
քի շինութիւններ են կոռուցվում, ամբար-
ներ եւ այլն, մինչեւ անգամ անտառներ, կամ
այնպիսի հողեր որոնց վրա ընդարձակ տըն-
տեսութիւն է լինում, օրինակ ցորեն, հիւ-
սիսում գայլուկ, հարաւում բամբակ եւ
բրինձ, — այդ տեսակ հողեր աւելի լաւ է
եթէ հասարակաց լինեն: Մեծ չափով կա-
տարվող ընդարձակ տնտեսութիւնները պա-
հանում են ահագին տարածութիւնների եւ
չէ կարելի թոյլ տալ որ այդ տեսակ ան-
հրաժեշտ հողերը կտոր կտոր լինեն, այն
ինչ գիւղական անձնական հողերը միշտ ա-
ւելի փոքր տարածութեամբ են լինում:

Հաւասարակեցութիւնը համայնքի եւ անձ-
նական հողերի մէջ մանաւանդ իրագործ-
ված ենք տեսնում Ֆրանսիայում:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱՆՈՒԹԻՑ

Մայիսի 28-ին

Մի լուր կը հաղորդեմ ձեզ:

Երկու թուրք կամեցան են որ մի հայից թե-
վովէր գնեն. հայը իրը գնահատում է 15 ռ.,
թուրքի մէկը ցոյց է տալիս իր բեւոյժները, որ
լքացած է լինում եւ չը զգուշացնելով այդ մասին
տալիս է հային, որ իր ձեռքում սկսում է փո-
ր

ձեւ եւ սկսում է արաքել. ուղիղ դնալով
կոկորդը ծակում է եւ պարանոցում մնում, հա-
նելու հնար չը կայ. թուրքը կը մեռնէ, գէթ այն-
քան թուրք են գտնվել, որ հային չեն մատ-
նել:

Մի լուր եւ. այստեղի հրէաների տարածի
մեծ է, երբ լսում են իրանց արեւմտեանների
հալածվելը Գերմանիայում եւ Ռուսաստանում:

Խեղճերը կարծում են, որ մի օր էլ իրանց վրա
պիտի յարձակվեն Բագրվում. ասում են հրա-
հանգ են ստացել, որ իրանց ինչքերը բանկում
ապահովացնեն, եւ իրանց խանութները կողպեն
քրիստոնէականների կիրակի օրերը. լաւ են մտա-
ծել, բայց դժուար թէ այլ եւս այդպիսի զէպքեր
պատահեն պատեղ, այսինքն հրէաներին կամ
պարսիկներին ծեծելը:

Պետրովսկուց լուր կայ, թէ մի հայ երկա-
տարը Թուրքիանց ազգաւորում, ընկնում է
այնտեղի ձիաշարժ երկաթուղու եւ կառքի մէջ-
տեղ եւ օտերը ծնկնիկից կտրվում են. մահը լաւ
է, քան այնուհետեւ ապրելը:

Բագրվում շատ տաք է: Փոշին անտանելի է.
յայտնի փողոցները միայն սրսկվում են հա-
րային իւրով (նաւթ):

Вухарецъ անունով մի չղեկնաւ ընկղմեց,
որ պարսիկ Դատաշեանին էր պատկանում:

Ա.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Երեւան, 30 մայիսի

«Մշակ» լրագրի օգուտը եւ ինչպէս
Երեւանի փոստատան մէջ իբր եղած անհաւա-
տալի անկարգութիւնների մասին, վասն որոյ
հարկաւոր եմ համարում յայտնել որ եւ փոս-
տապետ լինելով Երեւանի փոստային կայարա-
նի, մի եւ նոյն ժամանակ ունեմ առանձին յանձ-
նարարութիւն, վասն որոյ կայարանի կառավա-
րութիւնը գրեթէ մի ամբողջ տարի է, որ յանձ-
նած էր իմ օգնական պ. Մարգարեանցին, որը
պարտաւոր էր ունենալ նկատողութիւն. ինձ
ցարդ ոչ ոք չէ յայտնած անրաւակնութիւն
գէպի իմ ստորագրեալները անձաւորութեան նկատ-
մամբ: Եթէ յայտնած լինէր ինձ մէկը՝ թէ այս
կամ այն անկարգութիւն է լինում իմ տեսչու-
թեան ներքոյ եղած կայարանում, անշուշտ նա
կը ստանար իւրիւր բաւարարութիւն: Բայց որ
արդէն դիմել է խմբագրութեանը, դրա դէմ ո-
չինչ չունեմ, միմիայն խնդրում եմ որ այժմ բա-
րեհաճի ձեռք պ. թղթակիցը իբրեւ ազնիւ եւ ճշ-
մարտաւեր մարդ յայտնել ինձ առաջին՝ այն
տիկնիկների եւ պարտիկների ազգանունները, որոնց
գրեանքն եւ լուսանկար պատկերները փոստային
աստիճանադրները իրանց արժանաւոր պատիժը յօ-
րինակ այլոց որ միւս անգամ ոչ ստախոսու-
թիւն անեն եւ ոչ ուրիշի ապրանքին տիրապե-
տեն:

Այս բոլորն իմանալուց յետոյ մեղաւորները
կը ստանալին իրանց արժանաւոր պատիժը յօ-
րինակ այլոց որ միւս անգամ ոչ ստախոսու-
թիւն անեն եւ ոչ ուրիշի ապրանքին տիրապե-
տեն:

Խնդրեմ, պ. խմբագիր, այս երկուոցն էլ զետե-
ղել ձեր լրագրի մէջ ձեռնարկութիւնը վերականգ-
նելու համար:

Փոստապետ Ա. Գեհկարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մենք լսում ենք որ Երեւանի նահանգի կա-
լուածատէրերի պատգամաւորութիւնը, որ եկած

է թիֆլիս, երկու օր սրանից առաջ ներկայացաւ պ. Կուչաեւիկին, որ նախագահ է Երևանեան նահանգի կառավարական յարաբերութիւնները կարգադրող յանձնաժողովի: Նորին գերագնացութեան տանը հաւաքված ժողովին ներկայ էր և Երևանի նահանգապետ պ. Շալիկով: Տեղեկանալով պ. Կուչաեւիկից թէ ինչ գնով են գնահատուած Երևանեան նահանգի կառավարները, թէ թուրք և թէ հայ կառավարները յայտնեցին որ կատարելապէս աղքատանալու են, և որովհետեւ կառավարները գիւղացիների ձեռքով յետ գնելու ժամանակ, այն գնով որով յանձնաժողովը գնահատում է ամենալաւ հողի դեմատիրը կառավարները մի րուբլու տեղ մի կոպէկ պէտք է ստանան, այդ պատճառով նրանք ամենին ուղինչ չեն կամենում ստանալ, որովհետեւ մի և նոյն է երկու տարուց յետոյ աղքատանալ թէ այժմ:

Մայրաքաղաքի քաղաքները հաղորդում են, որ Ռուսաստանի հրէաները պատգամաւորութիւն են ուղարկուած ներքին գործերի մինիստր, կոմս Իգնատիեւի մօտ, խնդրելու համար որ հրէաներին ռուս միւս քաղաքացիներին հաւասար իրաւունքներ տրվեն:

«Новое Время» հաղորդում է որ Ս. Պետերբուրգի չորսնի գիւղական հասարակութիւնները խնդրեց են ներկայացրել կառավարութեանը, որ նրանց թոյլ տրվի մտցնել արհեստների դաստաւութիւնը ժողովրդական դպրոցներում:

«Новости» քաղաքը լսել է որ դիտաւորութիւն կայ փոխարինել գլխահարկը կառավարական հարկով:

«Русский Курьер» քաղաքին հաղորդում են Կիևից, որ հրէաների դէմ անկարգութիւն անողների վրա կայացած դատաստանով խռովարարներից գլխավորը, Բուեվ, դատապարտված է 20 տարվայ տաժանակիր աշխատանքին աքսորանքի մէջ, Կոլբա 15 տարվայ, Սադէնկո 10 տարվայ և Կաչանովի 6 տարվայ: Մնացածներից երկուսը դատապարտված են աքսորանքին Սիբիր, բնակութեան համար, իսկ երեքը բնակարարութեանը երկու ամսով:

Կիևիում կատարվելու է հրէաների ժողովրդագրութիւնը: Այն հրէաները, որոնք իրաւունք չունեն Կիևում ապրելու, կաքորվեն քաղաքից:

«Голосъ» լսել է որ դիտաւորութիւն կայ սահմանափակել Մոսկույի համալսարանի բժշկական բաժնի ուսանողների թիւը: Այդ լուրին «Порядокъ» քաղաքը աւելացնում է այն տեղեկութիւնը իւր թէ իրանք պրոֆեսորները զանգուստվում էին որ բժշկութեան ուսանողները Մոսկույի համալսարանում շատ բազմաթիւ են և անհարկին է դասախոսութիւններ կարգաւ այդքան բազմաթիւ լսողներին, որոնցից արդէն զուգընթաց կուրսեր կազմվեցան: Բայց մի և նոյն ժամանակ աւելացնում է «Порядокъ» քաղաքը, Ռուսաստանի բժշկների մէջ մեծ պակասութիւն է գգում: Պարզ է որ Ռուսաստանի պէս մի անգլիէ պետութեան համար համալսարանների թիւը փոքր է:

«Соврем. Извѣст.» քաղաքը հաղորդում է որ այս րօպէին երեկի ռուս բամբակաւ ճարգեղեկ Մոսկույում է գտնվում: Նա նորերումն ներկայ գտնվեցաւ Պետրոսովու Թատրոնում Օստրովսկու «Лѣсъ» անունով պիէսայի ներկայացմանը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

Իշխան Բիսմարկ, ինչպէս հաղորդում են Բերլինից, շարունակաբար ուշադրութիւն չէ դարձնում և արհամարհանում է վերաբերվում պարլամենտական իրաւունքներին: Մայիսի 27-ին, պարլամենտական երեկոյթի ժամանակ Բիսմարկ ասել է, որ պէտք է անհամափակել պարլամենտական վիճարանութիւնները, այնպէս որ լայնատաղի մէջ պատգամաւորները իրաւունք չունենան ու

րոշված ժամանակամիջոցից աւելի խօսել: Տարաբաղդաբար իշխանը չէ յայտնել, թէ այդ կանօնը կը գործադրվի արդեօք նոյնպէս և կառավարութեան անդամների վերաբերութեամբ, որոնց թւում է իշխան Բիսմարկի, որի պարլամենտական ճառերը միշտ երկար են լինում:

Նորերումն Բիսմարկին այցելեցին իշխան Գորչակով, զենեւալ Շանգի, կոմս Սեն-Վալիէ և Գոչեն: Չը նայելով իր հիւանդութեանը, Բիսմարկ ընդունեց նրանց և բաւական ժամանակ խօսեց նրանց հետ այն հարցերի վերաբերութեամբ, որոնք պէտք է ընկնէին այդ դիպլոմատների Բերլինից անցնելու ժամանակ:

Գերմանական կառավարութեան և վատիկանի մէջ բանակցութիւններ են կատարվում կրօնական մի քանի հարցերի վերաբերութեամբ: Քաղաքական շրջանները համոզված են, որ այդ բանակցութիւնները համաձայնութեամբ կը վերջանան: Գերմանական կայսրի և պապի անձնական յարաբերութիւնները շատ լաւ են: Վիլհելմ կայսրի ծննդեան տօնի առթիւով կայսր և պապը միմեանց նամակներ գրեցին: Պապը շնորհաւորեց կայսրի տօնը և մի և նոյն նամակով յիշեցրեց, որ նրա կոչումն է հաշտութիւն հաստատել կաթոլիկ եկեղեցու և Գերմանիայի մէջ: Կայսր պատասխանեց, թէ նա ուրախ է, որ պապի և գերմանական կառավարութեան մէջ համաձայնութիւն է կայացել եկեղեցական հարցերի վերաբերութեամբ և ցանկութիւն յայտնեց, որ այժմ կատարվող բանակցութիւններն էլ նոյն հետեւները ունենան:

Գերմանիայի շատ տեղերում մի խնդրաւոր է ստորագրվում հասարակութիւնից, որ պէտք է ներկայացնել կառավարութեանը և որի մէջ ցանկութիւն է յայտնված վերջինի իշխանութեան վատ վարմանքին զինուորների հետ: Խնդրագրի մէջ 'ի միջի այլոց ասված է, որ զինուորները պարտաւորվեն ամեն անգամ յայտնել բարձր իշխանութեանը, երբ նրանց հետ իրանց գըլխավորները վատ կը վարվեն:

ԹԻՒՐԿԻԱ

Կ. Պոլսից «Daily News» քաղաքին հաղորդում են մայիսի 28-ից հետեւեալը: Այս շաբաթ սուլթանի պալատի մէջ քննութիւն կատարվեցաւ Միտհաթ-փաշայի գործի մասին Այստեղ համոզված են, որ մեղադրվածները ենթարկվել են տանջանքների: Յայտնի չէ, թէ որքան իրաւացի է այդ համոզմունքը, միայն թէ հասարակական կարծիքը չափազանց վրդովված է պալատական դատաւորների բռնած ընթացքից: Ինչ վճիռ էլ կայացնի դատարանը, ոչ ոք չի հաւատայ նրա արդարութեանը, եթէ գործը փակված դնելով քննվի: Միտհաթ-փաշայի խնդրերին, նրա անձնաւորութիւնը ապահովելու մասին մինչև կանօնաւոր դատարանի վճիռ կայացնելը, արդարութեան միջնորդ Զեկեհա-փաշա պատասխանեց, որ թիւրքաց դատարանները և քրէական օրէնքները կատարելապէս եւրօպական ձեւով են կազմված: Այդ պատասխանը իրաւացի է և հետեւապէս աւելի էլ անտեղի կը լինի զաղտնի դատարանը: Տեղական թիւրք քաղաքները, որոնք անմիջապէս Բ. Կոնստանդնուպոլիսում, Միտհաթ-փաշայի և միւս մեղադրվածների մասին վատ են խօսում: Այնքան է, որ նրանք հրահանգ են ստացել հասարակական կարծիքը մեղադրվածների դէմ գրգռելու: Համարձակաբարութիւնը ոչինչ չը գիտէ քննու

թեան ընթացքի մասին և այդ հանգամանքը առիթ է տալիս կարծելու, թէ դատաստանը սխալած է արդէն վաղուց որոշված վճիռ կայացնելու նպատակով վտանգաւոր հակառակորդներից ազատվելու համար: Մի և նոյն ժամանակ մեղադրող իշխանութիւնը այնքան շատ վկաներ ունի, որ անպատճառ հարկաւոր է հրապարակական դատաստան անել:

Միտհաթ-փաշա Պերայի մէջ բաղմամբիւ կուսակիցներ և գործակաւորներ ունէ: Տեղական երկու լրագիրները «Phare du Bosphore» և «Stamboul» Միտհաթին պաշտպանող յօդուածներ տպեցին և այդ լրագիրներին առաջինը արգելվեցաւ: Նորերումն լուր տարածվեցաւ, որ Մահմադ-Նեւի-փաշա հրաժարական է տուել այն պատճառով, որ սուլթանը բաւական խրատութեամբ չէ վերաբերվում դատապարտվածներին: Պատմում են, որ դատաստանական այդ գործի գլխաւոր պատճառը Մահմադ-Նեւի-փաշայի թշնամութիւնն է դէպի Միտհաթ-փաշան և միւս մեղադրվածները: Այդ ճիշդ չէ, որովհետեւ, երբ երեք տարի առաջ կէս գիշերին Միտհաթ-փաշա տարվեցաւ շոգեխաւը և Բերեդիգի արտաքսվեցաւ, Մահմադ-Նեւի-փաշան էլ այդ ժամանակ աքսորանքի մէջ էր:

ՖՐԱՆՍԻԱ

Յունիսի 2-ին վախճանվեցաւ գիտական լեզուագէտ Լիտրէ: Նա մկրոված չէր և ընդունեց մկրտութիւնը մահուան մահճի մէջ: Իր մահից կէս տարի առաջ Լիտրէ բարեկամացաւ Գիւլվիէն արեղայի հետ, որ գրեթէ ամեն օր նրան այցելում էր: Լիտրէի Միտհաթ-փաշայի երեւի կատարվեցաւ այդ արեղայի ազդեցութեամբ: Այսպէս թէ այնպէս Լիտրէ վախճանվեցաւ, ունեցաւ եկեղեցական յուղարկաւորութիւն և թաղվեցաւ: Քրիստոնէական կանօնների համեմատ: Կաթոլիկ հոգեւորականութիւնը աշխատեց այդ տխուր հանգիստ առանձին շքեղութեամբ կատարել: Դաքաղը, եկեղեցի տանելու ժամանակ, շրջապատված էր հոգեւորականներով, իսկ եկեղեցու դռանը նրան հանդիպեցին բազմաթիւ արեղաներ և կոյսեր: Հանգուցայի գերեզմանի վրա նրա աշխատակից և բարեկամ Վիրուբով մի սրտաշարժ ճառ արտասանեց: Լիտրէի մկրտութիւնը մասամբ նրանով է մեկնվում, որ նրա կինը և աղջիկը եռանդոտ կաթոլիկներ են:

Պարիզի մէջ մեծ ազդեցութիւն գործեց Բոբերտ Միտհաթի բաց նամակը իշխան Նապոլէօնին: Միտհաթ պատմում է իր խօսակցութիւնը իշխանի հետ, որի ժամանակ վերջինը նրան ասել է, թէ նա ճանաչում է հանրապետութիւնը և կուզենար նրա նախագահ լինել: Բայց այդ հանգամանքը չարգելեց իշխանին Յունիսի վերաբերութեամբ Խալիլայի պաշտպանել իր լրագրի մէջ: Յայտնի է, որ իշխան Նապոլէօն պատկանում է Լուիս-Ֆիլիպ Թագաւորի քրոջ վրա:

Ֆրանսիական սենատի մէջ սկսվեցան վիճարկութիւններ սկզբնական պարտադրութեան մասին: Այդ օրինագիւր դէմ խօսեց նախկին մինիստր Ֆուրու, որ պաշտպանում է Լուիս-Ֆիլիպի, որի մարդուն հաւասարեցնում է անանի հետ և պրեզիդենտ կոչվող նրա պատակների գործիչ է դառնում: Հանրապետականներից մէկը յիշեցրեց այն իրողութիւնը, որ Ֆրանսիական զօրքերի 33% անգրագէտ են և որ անհրաժեշտ է դրա

առաջն առնել: Այդ հարցի մասին վիճարկութիւնները դեռ չեն վերջացել:

Ֆրանսիական գործակաւորները, որոնց յանձնված էր Անգլիայի հետ առեւտրական դաշնագրութեան նախագիծը կազմել, վերադարձան Լոնդօնից առանց գործ կատարելու: Նրանք մինչև այժմ չը կարողացան համաձայնութիւն կայացնել անգլիական գործակաւորների հետ դաշնագրի ոչ մի կէտի վերաբերութեամբ: Յունիսի կէտին Ֆրանսիական գործակաւորները նորից կուղեորվեն Լոնդօն:

Ընտրողական հարցի վերաբերութեամբ ծագած անհամաձայնութիւնները սենատի և պատգամաւորների ժողովի մէջ յուսաւորեցին յետգիւմականներին: Ի նկատի առնելով, որ կարող է այդպիսի անհամաձայնութիւն ծագել, չափաւոր հանրապետականները վճռել են նրա առաջն առնել և ընդունել Բարիուր օրինագիծը: Այդ պատճառով Վալդեմարսի գեկուցումն, որ ուղղված էր օրինագիւր դէմ, սենատի մէջ սառնութեամբ ընդունվեցաւ: Եթէ սենատը մերժի ընտրողական օրէնքը, նա կը կորցնի իր համարմունքը և աւելի մեծ նշանակութիւն կը տայ Գամբետային:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻԱՅՑ

Կ. Պոլսից, 24 մայիս 81

Վերջապէս հայկական հարցը օրուան խնդիրն ըլլալ սկսաւ, և կը սպասենք անհամբեր լօրտ Տրիքիէի զարտեան: Բայց կարծիք է մնալ համար գիտնալ թէ ինչ կը մտածէ կառավարութիւնը: Կիտի պիւլէ իւր նախորդ որոշմանց վրայ, այն է ինքն ներմուծէ բարեկարգութիւնը թիւրքաց շայատան, թէ աւելի իմաստուն գտնուելով պիտի ուղէ անալ Ներսիսի: Պիտի դիմէ զանազան ներգործեանց ինչպէս Մոսկուէնկոյի և յունական հարցերու միջոցին, թէ անկեղծ կերպով հայերն չանկու: քաղաքականութեան պիտի հետնի: Առ այժմ երեւոյթը այնպէս է որ այս խնդրոյ մէջ Բ. Կրան քաղաքականութիւնը յայտնի կամ զաղտագողի գիտաւորութիւն մը պիտի ըլլայ: Թիւրք թիւրքերը սկսած են հասկնալ որ Ներսիսի պահանջման չուտով գուրու ծուկու տրամագիր չեն, ար ըն թ ա ց ք մը պիտի ունենան, և թէպէտ Մ Ե ս է ն ճ ր փաստերով ցոյց կուտայ որ միշտ կառավարութեան օգտակար եղած պիտի ըլլար, եթէ անմիջապէս անսար Ներսիսի և պահանջները գոհացնէր, քան թէ պապէս խաղցնէր, բայց և այնպէս թիւրքերը պիտի զարկուկ կը մնան և քրդական միութիւնը առաջ կը քշեն: Այս օրերս դարձեալ Ուլպետուլարի վրա կը խօսուի ամեն կողմ: Կառավարութիւնը կը հաղորդէ թէ հրաման խրված է Եւթիմի Կ. Պոլսի գալ և իւր յայտադրը (?) ներկայացնել: Յայտնի է որ Ուլպետուլար տեղէն չարժեքու գիտում չունի, և Հայաստանի զանազան կողմերէ ի Պոլսեւրիս ժողովուած վիտուորներն մեծ օգուտ մը չունին նորա ձեռնարկներն ջլատելու: Բայց այս հրահեքը, այս վիտուորական ցոյցերն դուցէ քաւական համարելն համոզելու զգարելներն թէ Բ. Կրուքը ըրաւ ինչ որ կարելի էր Ուլպետուլար իւր խորհուրդներէն: Ետ կեցնելու համար Բայց պարսկներն ալ չուտով համոզուող չեն և գիտեն թէ Եւթիմի չարժեքներն Վալիքի կը քաջաւերուին պարսից ու հայոց դէմ: Մեր պատրիարքը ու պարսից Կ. Պոլսոյ դեսպանը այս մասին կարծեաց փոխանակութիւն մը ըրին: Պարսկաստանէն Կ. Պոլսոյ Ա թ է ր պարսկերէն թիւթին գրուած նամակէ մը կրմանանք թէ պարսկի քիւրդերու իւլ է մահ երբ կրօնական ժողով մը գուրմարելով, համոզում գոյացուցեր են թէ կարող են 100,000 վիտուոր մատակարարել պարսից իշխանութեան, եթէ նա գոհացնէ քիւրդ ցեղերը և այս իրենց համոզումը տեղեկագրով մը պաշտօնապէս հաղորդել են Շահին: Հարկը հազար զինուոր, չափազանցութեան սահմանէն ալ կանցնի: Կերել թէ քիւրդերն սկսած են ամեն կողմ երկրաչափական յառաջադրութեան օրինօք աճել: Ուլպետուլար ալ իր մէկ անհասական նամակին մէջ, զոր Մ Ե ս է ն ճ ր կը հրատարակէ, կըսէ թէ քիւրդ ազգութիւնը 500,000-էն աւելի

պէս ինչի հարկաւոր է որ առողջապահութիւնը համեմատելի լինէր թերապիայի հետ. այն նպատակով որ որոշվի կեանքի եղանակը (Modus vivendi).

Առաջին դրոշի ակորդակը և արտադրող մարտողական հիւսիսի ստամոքսն է, զլիսաւորապէս իսկ մասամբ և բերանը. որ մենդի առաջին ճանապարհն է, որի միջոցով ամեն բան նախապէս ծանած և խմած մտնում է ստամոքսային լարութեամբ: Այն-Բաֆայէլի գինին, ինչպէս այդ ապացուցեց շատ տարիների փորձը, զրգուում է ակորդակը և նպաստում է մարտողական հիւսիսի արտադրութեան և այդ պատճառով, այդ կրկնակի օգուտը աչքի առաջն ունենում, այդ իր ազդեցութեամբ գերազանց գինու գործածութիւնը տարուց տարի աւելի է տարածվում:

Ամեն հասակում այդ գինին օգտակար է: Այդպէս մանկութեան ժամանակ, երբ բնական օրէնքին համեմատ փորում է մեծ մասամբ լիմֆատիկային տրամադրութեամբ, մանուկանդ աղջկանց մօտ կազմութեան մէջ և երբ ստամոքսը զանազան է գործում, կարելի է հաւատացած լինել որ Այն-Բաֆայէլեան գինու փորձի ընդհանր (ինչպէս Բօրգօի գինու համար) ճաշից առաջ, իսկ եթէ հարկը պահանջի և ճաշից յետոյ, կը վերադարձնի մանկական ստամոքսին նրան պակաս եռանդը մարտողութեան և այդ գործակատարութիւնների համար և բնական պահանջը դէպք կերակուրը:

Երկու սեռի վարժարանների մէջ վաղուց է որ ընդունված է տալ այդ գինի աշակերտներին և աշակերտուհիներին, որոնք ունեն արխանի պակասութիւն, որ մեծ մասամբ լինում է պատանեկութեան հասակին նախորդ հասակում եւ մինչև անգամ այդ վերջին հասակում միջին կը գտնվի մեր ժամանակին գոնէ մի աղջիկ, որին օգտակար, իսկ շատ անգամ անհրաժեշտ էր լինի ամբողջով օրգանական ոյժերը, զարգացման ընթացքին, որ կատարվում է այդ հասակում, նը պատեղու նպատակով:

Վերջին մեր ասածները մանկութեան և պատանեկութեան մասին կարելի է լրովին վերաբերել և մնացած հասակներին մարդկային կեանքի: Այդ հանգամանքը բացատրում է Այն-Բաֆայէլի գինու տարածվելը, որին նպաստում են ժամանակակից բժշկները: Առաջ այդ գինին արվում էր միմիայն հիւանդներին և առողջացողներին, իսկ այժմ նա գործ է ածվում և առողջներից այն պատճառով, որ մեր ժամանակում մեր առողջութեան դրութիւնը պահանջում է մեծ մասամբ նոյն նպատակով միջոցներ, հիւանդութեան առաջն առնելու համար, որոնց խորհուրդ է տալիս բժշկական գիտութիւնը հիւանդութիւնները բժշկելու համար:

«Խ Ե Ն Թ Ը»

ԱՐԿԱՇՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՋՄԻՑ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ԲԱՑՅԻԻ

Տպված մուգուր թղթի վրա, գիրքը բաղկանում 400 էրեսից: Թիֆլիսում ծախվում է «Մշակի» խմբագրատանը, «Կենտրոնական գրադաճառանոցում», «Կովկասեան գրաւ-վաճառանոցում» պ. Զաքարիա Գրիգորեանցի մօտ, և պ. պ. Շահինեանցի, Բօգար-Ջեանցի, Հովհաննիսի ծխախոտի մագազիններում:

Գինն է 1 ռուբլ 20 կօպ:

Въ Редакціи газеты
«МШАКЪ»
Продается
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ
ТУРЕЦКИХЪ АРМАНЪ.“
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

144 Արծրունու դաշերէա 144
ամենաէական պահանջ
մերէլի և հայելիներէ:

Արդէն վաճառվում է

ԻՆՁ ԲԱՆ Է

ԺԱՆՏԱԽՏԸ

Ինչ բանով կարելի է փրկուել նորանից և այլ տարափոխիկ տկարութիւններից: Ժողովրդական և հասարակաց մատչելի խրատ բժիշկ Պ. Ա. Իլինսկոյ:

Թարգմանութիւն Ա. Ս. Գուլամիրեանց
Գինն է 15 կօպ. 100-ներով գնողներին զի-ջուան կը լինի: Մեր հասցեն՝ Вѣ. Ծриванѣ
А. Гуламирянцу

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՆՎՈՒԹԻՒՆՆԵՐ—ՀԵ-
ԲԱԹՆԵՐ. ԺՈՂ. ԵՐԳԵՐ. ԲԱՌԵՐ. ԱՌԱՎ-
ՆԵՐ. ԱՆԷԺԻՔՆԵՐ. ԵՐԳՈՒՄՆԵՐ. ՀԱՆԵՆՈՒԿ-
ՆԵՐ, և այլն, ուղարկող պարոններին խնդ-
րում եմ այսուհետեւ ինձ հետեւալ հաս-
ցեով գրել:

Вагаршапатъ. Тиграну Навасартянцъ.
Տ. Նաւասարդեանց.
1—6

Ժողովել եմ, Ժողովում եմ և շուտով ի
լոյս պէտք է ածեմ հայկական ձայնագրու-
թեամբ «Ծաղկաբաղ ձայնագրեալ երգա-
րան» ուստի խնդրում եմ ձայնագրագէտ-
ներին և այն պարոններին, որոց մօտ գը-
տանվում են ազգային երգեր թէ հայկա-
կան և թէ եւրօպական ձայնագրութեամբ
(նօտաներով) բարեհաճել մինչև յառաջա-
կայ օգոստոս ամիսը ուղարկել ինձ: Երգեր
ուղարկողների ազգանունները կը ապա-
գրուին երգարանի վերջը և մի-մի օրինակ
էլ ձրիապէս կը ստանան: Վարձատրութիւն
պահանջողները ևս կարող են իրանց պայ-
մանները յայտնել: Իմ հասցեն: Տիֆլիս, Եղ-
նիկ քահանայի երգիկեանց:

6—10

ԱՌՆԵՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ
ՊՕՊՕՎ Կ. Ե Ս. ԵՂԲԱՅՐՆԵՐԻ

Մ օ ս կ վ ա յ ի մ է ջ:

Պատիւ ունենք յայտնել ընդհանրու-
թեանը, որ ներկայ տարուայ յունիսի 2-ից
Թիֆլիսի մէջ, Գօյովնիսկի պրօսպեկտի վրա,
Միլիմանովի տանը կը բացանենք մեր մու-
գազներ, ուր կը վաճառուի թէ մեծ և թէ
փոքր քանակութեամբ (оптовая и рознич-
ная продажа) մեր Ֆիրմայի շայ (Թէյ) կը-
շուած Մօսկվայում մեր տանը, մեր անձ-
նական հսկողութեան տակ: Բացի թէյից
Թիֆլիսի մեր մագազինում կը մանրավաճա-
ռուի նոյնպէս շաքար և զափա:

5—5

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ (աթուներ և բազմաթուներ) ծախվում են մեծ
քանակութեամբ և մանր, միջի փողոցում կատարիւն փողոցի անկիւնում ՄԻ-
ԲԱՅԵԼ ՏԵՐ-ՆԻԿՈԼՈՍԵԱՆԻ պահեստում:

Օտարաբաղաբոցիք կարող են գրել այս հասցեով. Тифлисъ, Михаилу
Н. Теръ-Никогосову.

13—150

Արդէն ուղարկվեցաւ իւր բաժանորդներին ԲԱՑՅԻԻ «ԽԵՆԹԸ» անու-
նով վիզատանութիւնը: Նոր գնել ցանկացողներին խնդրում ենք գրել ՇՈՒՇԻ,
կամ ուղղակի հրատարակչին, կամ Մահմադ-Յախորեանցի տպարանը: ԲԱԳՈՒ
պ. Արեքսանդր Թարխանեանցին, ԹԱՐՎԷՋ պ. Գրիգոր Բէջանեանցին.
Հրատարակչի հասցեն. Шуша, въ конторѣ Арумянца АБЪДУ АП-
РЪСЯНЦУ.

Չը նայելով մարտերի աւելանալուն ապրանքները առաջվայ գներով կը ծախվին.
ԿՈՆԳՈ-ԹԷՅ 1 ռ. 5 կ. և 1 ռ. 10 կօպ., շատ լաւ ՄՕՆԵՆԳ 1 ռ. 20 կ. և
1 ռ. 40 կ., հիւանդի ԿԱՅՍԱՌԻ 1 ռ. 60 կ. և 1 ռ. 80 կ. և ԱՄԵՆԱԼԱԻ
ԹԷՅ 2 ռ. ստանց թղթի: Անգլիական ըէվոլիւսներ 4 ռ.—40 ռ. և հրացաններ 20
ռ.—200ռ. Անգլիական խանութի մէջ: Գործակալութիւն ԲԱՐՆՍԲԻԻ ԹԱՄԲԵ-
ՐԸ, Ջօնսօնի ԿՈՂՊԵՔՆԵՐԸ, Տուրսօրի ԳՐԻՉՆԵՐԸ և էկտարակա կախօ-
շօկալի ծախելու համար, որոնք վարդի հանդիսի ժամանակ ոսկէ մեղալ ստացան:
ՀՈՏԱԽԷՏ ԹԷՅԻ ՖՈՒՆՏԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԷՅԱՄԱՆՈՎ 1 ռ. 65
կ. և ամենալաւ 2 ռ. 30 կ.: Ս աճառականներին օգտաւէտ է մեծ քանակութեամբ
ապրանքներ առնել Անգլիական խանութի մէջ: Ամբողջ հազուստ 15 ռ., կօնֆիկաներ
հազի դէմ 60 կ. ֆունտը:

85—100

Թիֆլիսի հայոց ծխական ուսումնարանների ներկայ 1881 թ. տարեկան հարցաքննու-
թիւնները

Մայիսի 22 և 23-ին Կաթողիկէ Ս. Գէորգ եկ. ուսումն.
" 25-ից—30-ը Հաւլարարի Մարիամեան օր. ուսումն.
" 28 և 29-ին Կուկիու Թանդոյեան օր. ուսումն.
" 30-ին Հաւլարարի Ս. Մինաս եկ. ուսումն.
Յունիսի 1 և 2-ին Կուկիու Ս. Աստուածածին եկ. ուսումն.
" 3 և 4-ին Ջրաշէն եկ. ուսումնարաններում.
" 5-ին Շամբուեցոց եկ. ուսումնարանում.
" 6-ին Ջորաբաշի Ս. Գէորգ եկ. ուսումնարանում.
" 8-ին Ս. Կարապետ եկ. ուսումնարանում.
" 9-ին Ջուրաբէթի Ս. Աստուած. եկ. ուսումնարաններում.
Թեմական վերատեսուէլ Բարխուդարեանց

ԱՄԱՐԱՆՈՅՆԵՐ

Տիֆլիսից,—մօտ 8 վերստ հեռաւորու-
թեամբ,—ՋԱԲԱՐԱՇՆՈՒՄ, փոքր Լիլոյի մօտ,
—վրաց Խուլթերայի կէս ճանապարհի վե-
րայ տրվում են վարձով երկու ԱՄԱՐԱՆՈՅ-
ներ, իւրաքանչիւրը՝ երեք սենեակից բաղ-
կացած իւրեանց առանձին խոհանոցներով:
Գնի մասին կարելի է հարցնել տիրօջը—
Ջաբ. Գրիգորեանցին — նորա գրախանու-
թումը:

4—10

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 30% ԷԺԱՆ
ԲԱՆ ԹԷ ՈՒՐԻՇ ՏԵԼ. մուրաբա-
ներ, կօնֆիկաներ, ԿԱԿԱՍ, բրինձ, Ա-
ՄԱՆԵՂԷՆ, բօկալներ, թասեր, երես լուա-
նալու ամաններ, չայիկներ, ԲԱԺԱԿՆԵՐ,
կերակրի ամաններ (судки), մատուցարան-
ներ, ԿՈՂՊԵՔՆԵՐ, ԳԱՆԱԿՆԵՐ, գալաներ,
ԳՐԻՉՆԵՐ, խմոր, մատրաններ, տկարակ-
ներ, ՀՐԱՅԱՆԵՐ, ԲԵՎՈՂԱԿՆԵՐ, պրօմ-
ներ, ՄԱՀԱԿԱԼՆԵՐ, ՀԱՌՈՒՄՏ, տրիֆո, պա-
րուսին, Թաշկինալներ, երկարիչներ, կիօն-
կա, դուրաններ, ԹԱՄԲԵՐ, ՊՕՐՏ-ՎԷՅՆ, խե-
րես, կօնեակ և այլն: ԹէՅ մեծ քանակու-
թեամբ վԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ համար ՊՈՒԳԸ
44 ռ., 46 ռ., 48 ռ., 50 ռ., 52 ռ., 54
ռ., և այլն: Այդ բոլորը կարելի է գտնել
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ.
Մի և նոյն տեղը էփան գիւղ. ՇԵՐԲԵՏ մա-
գնելու, խմոր ՄԱՐԱԽԻ դէմ, ԽԵՆԱՅԻ գի-
նի ջերմի դէմ, կարթուրան ֆՕՇԻ, հեղուկ
և ՍԱՊՕՆ, բժշկական թուղթ փառերկրօգի-
տի համար, պարսկական փօշի: 9—100

„ԵԳՕՐ ԿԱՍՈՒՄՕՎ և ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԷԼ-
խաւոր գրաւանակի մէջ, երեւանակայա հրա-
պարակի վրա, Զակելու տանը բացված է
ստորագրութիւն յօգուտ ի ՏԵՐ ՀԱՆԳԸ-
ցեալ կայսր Ալեքսանդր II-ի ՈՐԲԱՆՈ-
ՑԻ, որ բացվելու է Թիֆլիսի մէջ:
14—15

ՄԵԺԵՎՈՒ ԻՆԺԵՆԵՐ ՍԷՐ-
ԳԷՅ ԻՎԱՆՕՎԻՉ ԲԱԳԱՏՈՒ-
ՐՕՎ ընդունում է. կազմել ՅԱՏԱԿԱՆՆԵՐ
(պլաններ), գծագրներ, պրօֆիլներ, կա-
տարում է կալուածների, հողերի և ան-
տառների բաժանումն զնահատողական
գիտական հիմունքների վրա, կատարում
է ընդօրինակումներ (съемки) և հարթա-
չափութիւններ (нивелировка) ԲԱԺԱՆՈՒՄ
է ԱՆՏԱՌՆԵՐԸ կանոնաւորապէս զործածե-
լու համար, գնահատում է հողերը, ԽՈՐ-
ՀՈՒՐԴՆԵՐ Է տալիս երկրաչափական և
կալուածական գործերի վերաբերութեամբ
և մի և նոյն ժամանակ կալուածական գոր-
ծերի մէջ մասնագէտ լինելով իրաւաբանա-
կան, տեխնիկական և անտեսական կողմերից,
պատրաստ է որ և է հիմնարկութեան հա-
ւատարմատար լինել կալուածական և եր-
կրաչափական գործերի համար: ՀԱՍՅԵՆ և
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ թողնել «ՄԵԱԿԻ» խմբագ-
րատանը:

6—10